ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/1ՃՀ ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 10.04.2015թ. կնքված N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/1ՃՀ-5 պայմանագրում 2015թ. օգոստոսի 18-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. Նախագծումից հետո տեղումների հետևանքով առաջացած լրացուցիչ աշխատանքների իրականացման և նախագծային որոշ լուծումների ճշգրտման նպատակով ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/1ՃՀ-5 պայմանագրով նախատեսված Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան-Մ2, Ազատավան-Բերքանուշ 3,5 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվի «Ճանապարհային մաս», «Մետաղական խողովակ d=720մմ, ջրհորով ՊԿ 16+71» բաժիններում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և ավելացել են «Հեղեղատար կոյուղի ՊԿ 14+80-ՊԿ 16+80», «Մետաղական խողովակ d=325մմ, ջրհորով ՊԿ 18+21», «Անձրևընդունիչ ՊԿ 18+91» բաժինները:
Փոփոխության նկարագրություն:	Փոփոխության արդյունքում նվազել է Պայմանագրի գինը և Պայմանագրի 5.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն: Պայմանագրի թիվ 1՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ», թիվ 2՝ «Օրացուցային գրաֆիկ» և թիվ 3՝ «Վճարման ժամանակացույց» հավելվածները հաստատվել են նոր խմբագրությամբ:
Փոփոխության հիմնավորում:	Պայմանագրի 8.4 կետը ու հեղինակային հսկողություն իրականացնող «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի 10.08.2015թ. № Ռ.Ս.74/1 մասնագիտական եզրակացությունները: Կատարված փոփոխությունները չեն գերազանցում պայմանագրային արժեքի 15%-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ